գել անտի զայլ իշխանս Լատինաց։ Սակայն երկպառակութիւնն եւ ատելութիւնն, որ անկեալ էր 'ի մէջ Եւրոպեան գերդաստանին, երթալով երթայր եւ զօրանայր 'ի նպաստ Լատին իշխանաւորաց։ Մէլիք Բեամիլ արձակեաց զեղբայր իւր 'ի վերայ Դամասկոսի պաշարել զնա, և զրկել յիշխանութենէ զեղբօրորդի իւր, եւ ինքն դաշինս եդ ընդ թագաւորին Սիկիլիոյ · տալ զերուսաղէմ Լատինաց, բայց այնու պայմանաւ, չկանգնել վերստին զկործանեալ պարիսպ նորին, չլինել ձեռներեց Սախրայ և Ագսայ կոչեցեալ մզկիթաց, դիւղք և աւանք 'ի Պաղեստինայ մինչեւ յերուսաղէմ հանդերձ Նահանգաւ նորին մնալ 'ի ձեռս Իսլամաց · եւ երդուան 'ի վերայ այսմ դաշինն, և յանձն արար Բեամիլ զերուսաղէմ 'ի ձեռս թագաւորին Սիկիլիոյ (1230)։ Եւ Կայսրն հրատարակեաց զնա թագաւոր՝ 'ի մեծ գայթակղութիւն արեւմտեան քրիստոնէից · ապա եկն առնուլ զթագն Կոնստոպրէի 'ի սեղանոյ Ս · Գերեզմանին · եդ զայն 'ի գլուխ իւր և էանց խսկոյն յեւրոպիա։ Իսկ Մէլիք Նասր պաշարեալ զքաղաքն Դամասկաս, արար ժողով մեծամեծաց իւրոց, եւ ծանոյց նոցա զոր ինչ միանգամ արար Բեամիլ։

Եւ մինչդեռ նոքա ողբային 'ի վերայ կորստեան Երուսաղէմի, եհաս անդ Բեամիլ, և սաստկացուցեալ զպաշարումն էառ զքաղաքն · եւ ետ Մէլիք Նասրայ զԲերեք, զՇովալէք, զՊալգայ և զկողմանս Յորդանանու։

Սակայն Մէլիք Նասր, որ նստէր 'ի Բերեք, իբրեւ լուաւ զլուր մահուան Մէլիք Բեամիլայ, դիմեաց 'ի վերայ Երուսաղէմի եւ պաշարեաց զնա, զորոյ զպարիսպն տակաւ չինէին Լատինք ընդդէմ դաշինն կռելոյ, և սաստկացուցեալ զմարտն կործանեաց զոր չինեալ էին · և քանդեալ աւերեաց նաեւ զաշտարակն Դաւթի, որ զերծեալ էր յառաջին աւերածէն, և տիրեալ քաղաքին արտաքսեաց անտի զԼատինս, յետ կալոյ նոցա անդ ամս 11։ Կղերք Լատինաց դարձեալ կանգնեալ էին 'ի սմին ժամանակի սեղան պատարագի 'ի վերայ Սախրայ կոչեցեալ վիմին 'ի մզկիթն Օմարայ, որպէս պատմեն ճանապարհորդք Արաբացւոց։